YAVAŞ GAMATS
GAMATS YAVAŞ

13 Ağustos 2014

Aida G.
Gerçek G.
Halil İ. K.
Hripsime K.
İsmail K.
Mehmet O. Ç.
Metaksya D.
Taguhi G.
Özlem D.

YAVAŞ GAMATS - YAZ OKULU YARI RESMİ GAZETESİ 11 - 17 AGUSTOS 2014 ● SAYI: 1

# Ուսուցիչը որպես ուղեցույց

Հռիփսիմե - Աիդա




Յավաշ- Կամաց ամառային դպրոցի մասնակիցները իրենց առաջին աշխատանքային օրը սկսեցին բուռն քննարկումներով, թե որն է լավ ուսուցիչ լինելու նշանակությունը և ինչ կարելի է փոխել Հայաստանի և Թուրքիայի կրթական համակարգերում : Ըստ Այդին Ուգյուրի ուսուցիչները իրենց մեղքի բաժինն ունեն նրանում,որ աշակերտները չեն կարողանում ճիշտ արտահայտվել՝նախ վախենում են սխալվելուց և հետո հարցեր տալուց : Հազարավոր ,ինչպեսները պիտի փոխվեն ինչուների, որոնց պատասխանները պիտի տրվեն ուսուցչի կողմից:

Մասնակիցներից մի քանիսը ներկայացրին իրենց երկրի կրթական վիճակը: Թուրքիայից ժամանած մասնակիցները արտահայտեցին հետեվյալ մտքերը.

* Մենք տեսնում ենք մի բան , մեզ թվում է դա նարինջ է, բայց կտրում ենք և տեսնում ենք կիտրոն:

* Դպրոցներում ոչ մասնագետ ուսուցիչներ են աշխատում

* Տարեկան ընդունվում են 600000 ուսանողներ,որոնցից 350000-ը՝միայն դիպլոմի համար

* Աշակերտները ստիպված են կրկնուսույցների դիմել՝ բուհ ընդունվելու համար

* ազգային կրթության վիճակը հետեւյալն է.,Թուրք,մուսուլման,սուննի, հետերոսեքսուալ դպրոց:

* Հաշմանդամների համար չկան համապատասխան պայմաններ կրթություն ստանալու համար:

* Աշակերտները ստանում են տարբեր որակի կրթություն ըստ իրենց սոցիալական ապահովվածության աստիճանի:

* Պետական քաղաքականությունյան ճնշումը զգում ենք անգամ դպրոցում

Քննարկման ընթացքում պարզ դարձավ,որ և՛ Հայաստանը,և՛ Թուրքիան ունեն նույն կրթական խնդիրները ,և ուսուցիչների ձեռքում է գտնվում մի օղակ,որը կոչվում է ապագա սերունդ:



**İDAREDEN DUYURU:** 13 Ağustos, Çarşamba akşamı ekip olarak otel dışında yemek yenecek. Detaylar gün içinde açıklanacak.

Yavaş Gamats Yaz Okulu, Avrupa Birliği tarafından finanse edilen 'Ermenistan-Türkiye Normalleşme Süreci Destek Programı' kapsamında gerçekleşmektedir.
Ամառային դպրոցն իրականացվում է ,Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացինե ծրագրի շրջանակներում Եվրոպական միության ֆինանսավորմամբ:

# ‘Յավաշ-Կամաց’ , ձեզ հետեւում են



Մետաքսյա

...հնարավորություն ունեցել եմ: Ես մեր դպրոցի ‘Լրագրողների միության’ համակարգողն էի եւ դպրոցի ամսագրում ամիսը մեկ անգամ հոդված էի տպագրում:

**-Ընթերցողների կարծիքներն ինչպես էին անդրադառնում Ձեր եւ Ձեր հոդվածների վրա:**

-Ես գրել եմ, որպեսզի ներկայացնեմ իմ եւ իմ հասակակիցների առօրյան:Փորձել եմ լինել անկեղծ, հետաքրքիր եւ այն մարդը, որն իրականում եմ: Մարդիկ գնահատել են դա: Երեւի այդ է պատճառը, որ ոչ մի քննադատություն չեմ լսել:

**-Այսօր Դուք ‘Յավաշ-Կամաց’-ի լրագրող եք եւ Ձեր առջեւ խնդիր է դրված՝ լինել հնարավորինս հետաքրքիր եւ ընթերցված: Ինչ եք պատրաստվում անել այս ուղղությամբ:**

-Փորձելու եմ լինել ուշադիր, անդրադառնալ այն խնդիրներին, որոնք կհետաքրքրեն ընթերցողներին, ընտրել լավագույն ուղին՝ մարդկանց փոխանցելու այն, ինչով ես այստեղ ապրում եմ:

‘Յավաշ-Կամաց’ օրագիրը լույս կտեսնի 5 օր: Հոդվածները կներկայացնեն ծրագրի ընթացքն ու երիտասարդների առօրյայից հետաքրքիր դրվագներ: Իսկ թե որքանով այն կծառայի իր նպատակին, կիմանանք ընթերցողների արձագանքներից:

Լուսանկարչական սարքերով զինված մեր լրագրողները հետեւում են ձեր ամեն քայլին. այնպես որ, ուշադի՛ր եղեք:

Թողարկվեց ‘Յավաշ-Կամաց’ օրագրի առաջին համարը: Լրագրողների խումբը ձեւավորվել է ‘Յավաշ-Կամաց’ ծրագրի հայ եւ թուրք 8 մասնակիցներից, ովքեր լրագրողներ չեն,բայց կամավոր կմասնակցեն օրագրի լույս ընծայմանը: Երբ գրել, ինչ, ինչու, ինչպես. այս հարցերի պատասխանները ,լրագրողներերի հետ առաջին հանդիպմանը տվեց օրագրի խմբագիր  Օզլիմ Դալկիրամը: Նա երիտասարդներին ծանոթացրեց նաեւ հոդված գրելու մի քանի գաղտնիքների:

Լրագրության և ‘Յավաշ-Կամաց’-ում իր անելիքների մասին զրուցեցի ամենաերտասարդ լրագրող Աիդա Գրիգորյանի հետ:

**-Երբեւէ հնարավորություն ունեցել եք հոդված գրելու եւ տպագրելու, թե ‘Յավաշ-Կամաց’-ն առաջինն է:**

-Այո՛, դպրոցական տարիներին նման...

# Լողավազանի խնդիրը

Թագուհի - İsmail

Արդեն երկու օր է ինչ ‘Կարտեպե Պարկ Օտել’ հյուրանոցում են գտնվում ‘Յավաշ-կամաց’ ծրագրի մասնակիցները: Առաջին իսկ օրը մասնակիցները հետազոտելով հյուրանոցի տարածքը պարզեցին, որ հյուրանոցի լողավազանը փակ է: Խնդիրը փորձեցինք պարզել հյուրանոցի ղեկավարության հետ: Հյուրանոցի մենեջեր Օմուր Ալյաքութը ասաց, որ օրեր առաջ հորդառատ անձրևներ են տեղացել, ինչի պատճառով կեղտոտվել է լողավազանի ջուրը: Նա վստահեցրեց, որ ջուրն արդեն մաքրել են և քլորացրել: Դրանից բացի լողավազանի տարածքում իրականացվել են նաև վերանորոգման աշխատանքներ: Լողավազանը բացելու համար անհրաժեշտ է ստանալ առողջապահության նախարարության թույլատրությունը: Տիկին Ալյաքութը հավաստիացրեց, որ 13/04/14-ից լողավազանը բաց կլինի հյուրերի համար:



Փորձեցինք պարզել ծրագրի մասնակիցների կարծիքը լողավազանը փակ լինելու վերաբերյալ: Առնոն նշեց, որ լողավազանը կնպաստեր երկու հասարակությունների ներկայացուցիչների ոչ ֆորմալ շփմանը: Ծրագրի մեկ այլ մասնակից՝ Սեզեռ Դեմինն էլ ասաց, որ լինելով պրոֆեսիոնալ մարզիկ և չորս մարաթոնների մասնակից, շատ է ափսոսում, որ չի կարող օգտագործել լողավազանը մարզումների համար: Մեսրոպ Հարությունյանն էլ նշեց, որ մարդկային շփումների համար անհրաժեշտ է շփվել օդում, ջրում և ցամաքում: Լողավազանը բաց լինելու դեպքում շփումը կլիներ ավելի անմիջական:



# Neden Biz?

**Gerçek - Halil İ.**

İçinde bulunduğumuz yaz okulunun görünmeyen kısmını incelemek istedik. Bu amaçla işin mutfağına girmeye karar verdik. Yaz okulu başlamadan, tüm hazırlıkları yapan ve bizim burada bulunmamızı sağlayan proje sorumlularından Ebru Uzpeder ve Esra Güçlüer ile konuşma fırsatı bulduk. Bizlere içinde bulunmaktan büyük keyif aldığımız bu yaz okulu hakkında bilgiler verdiler. Yaz okulunun hazırlık aşamasını şöyle özetlediler.

Yavaş Gamats yaz okulunun Türkiye’de bu adla yapılan ikinci yaz okulu olduğunu ilkinin ise 2005 yılında Antakya’da düzenlendiğinden bahsettiler. Bu yılki de, Kocaeli’nin Derbent ilçesinde yapılıyor. Yaz okulu için 120’nin üzerinde  başvuru aldıklarını bu başvurulardan 21 Türk, 19 Ermeni öğretmen ve öğretmen adayı öğrencinin kabul edildiğini aktardılar.

Katılımcıların öğretmen ve öğretmen adayı öğrenci olarak seçilmesinin sebebini ise burada edindikleri bilgi ve deneyimleri kendi yaşantılarıyla zenginleştirip öğrencilere sağlıklı bir şekilde aktarmak olduğunu belirttiler. Yavaş / Gamats yaz okulu için yapılan çok sayıda başvurunun arasından katılacak olanları belirlemek için başvurdukları kriterler hakkında bilgi verdiler. Bu kriterlerin katılımcıların coğrafi dağılımı, mesleği, eğitim durumu, tecrübeleri, cinsiyeti ve yaşına göre belirlendiğini aktardılar.

Yaz okulundan beklentilerinin Türkiye ve Ermenistan ilişkilerinin normalleşmesi için bu alanda atılacak olan adımları gündeme getirmek, öğretmenlerin güçlendirilmesi ve desteklenmesi olduğunu söyleyen Güçlüer ve Uzpeder “böylece, iki toplum arasındaki barışma sürecinin bir aracı olarak eğitimin ve okulun kullanılması mümkün olabilir” dedi.